քանակը, այդ օրերին, հասնում էր 10,000 հոգու՝ բաղկացած հետեւեալ մասերից. 4րդ գունդը, 1,500 սին, 5րդ գունդը՝ 800, պարտիզանական առաջին գունդը՝ 1,200, Երզնկայի գունդը՝ 700, Մակուի գունդը՝ 300, սպայակոյտի պարէտի գումարտակը՝ 200, Վանի առաջին և երկրորդ գնդերը՝ 2,500 սին, 2րդ ձիաւոր գունդը՝ 700, Զէյթունի ձիաւոր գունդը՝ 500, պարտիզանական ձիաւոր գունդը՝ 800, յատուկ ձիաւոր գունդը՝ 500, Սմբատի, Դալի Ղազարի, Մուրատի խմբերը՝ 500 ձիաւոր, և 4 մարտկոց 16 թնդանօթներով*):

Այս ուժերը բաժանուած էին երկու մասի. մի մասը Դրօի հրամանատարութեան տակ Բաշ-Աբարանի ճակատում, միւսը՝ զօր. Դանիէլ բէգ Փիրումեանի հրամանատարութեան տակ Սարդարապատի դաշտում: Զօրքերի ընդհանուր հրամանատարն էր զօր. Սիլիկեանը, սպայակոյտի պետ՝ գնդ. Վեքիլեանը, որ և գծել էր կուի ընդհանուր յատակագիծը:

Թիւրքերի կողմից, Սարդարապատի ճակատում, գործում էր 5րդ դիվիզիան և բազմաթիւ անկանոն խմբեր, իսկ Բաշ-Աբարանի ուղղութեամբ՝ 3րդ դիվիզիան:

Կռիւները սկսուեցին Սարդարապատում, ուր մեր զօրքերը գրաւել էին Ղարախանլու-Քեորփալու-Զէյվա գիւղերի գիծը: Մայիս 21—22-ին տեղի ունեցան մասնակի ընդհարումներ. թշնամին որոնում էր հակառակորդի թոյլ տեղը՝ վճռական գրոհի դիմելու համար: Մայիս 23-ին զօր. Սիլիկեանը տուեց հակայարձակման հրաման: Հայկական ուժերը նեռուեցին առաջ: Բռնկուեց կատաղի ճակատամարտների երկար մի շարք: Թիւրքերը ցոյց տուին յամառ դիմադրութիւն՝ անցնելով բազմաթիւ հակայարձակումների: Ամբողջ օր, առաւօտից մինչև երեկոյ, որոտում էին թնդանօթները, որոնց գոռոցը հասնում էր մինչև Երեւան, ուր նոյնպէս տիրում էր տենդոտ եռ ու գեռ: Թիկունքից սայլերով, էշերով, ձեռքերով ռազմամթերք էին հասցնում կուռողներին, հաց, ծխախոտ, խմելու ջուր... Բազմաթիւ կամաւորներ՝ ծեր ու երիտասարդ՝ ռազմաճակատ էին շտապում: Ճակատի զինուորը չէր միայն — ամբողջ երկիրը մի մարդ, մի շունչ դարձած՝ կուում էր մահացու թշնամու դէմ:

Մայիս 24-ին թիւրքերը դիմեցին փախուստի: Մերոնք հալածեցին ոգեւորուած: Թշնամին յուսահատական դիմադրութիւն էր ցոյց տալիս և աշխատում դիրքեր գրաւել, բայց մերոնց չեշտակի հարուածների տակ չարունակեց փախուստը: Յաղթութիւնը մերն էր:

Այդ յաղթանակի առթիւ, նոյն օրը երեկոյեան, զօր. Սիլիկեանը ժողովրդին ուղղեց հետեւեալ սրտառուչ կոչը.

«Հայե՛ր, շտապեցէ՛ք հայրենիքն ազատելու:

Հասել է ըոպէն, երբ իւրաքանչիւր հայ՝ մոռանալով իր անձնականը, յանուն Մեծ Գործի՝ հայրենիքի փրկութեան և իր կնոջ ու աղջիկների պատուի պաշտպանութեան, պէտք է գործ դնի իր վերջին ճիգը՝ թշնամուն հարուածելու համար:

---

*) Յ. Մելիքեան, «Արեան ճանապարհով», «Հայրենիք» ամս., 1925թ. մայիս: